Զապել Եսայան

Նամակ Սոֆի Եսայանին 4

Վաղուց ուզում էի քեզ գրել, բայց սպասում էի քո խոստացած երկար նամակին: Վերջերս սկսել ես ուղարկել միայն հակիրճ հաղորդագրություններ, որոնք լի են խորհրդավորությամբ: Մենք ոչինչ չենք հասկանում և չենք կարողանում որոշակի կռահել, թե ակնարկություններդ ինչի մասին են: Հրանտը քեզ տեղյակ է պահում մեր այստեղի կյանքին, և ես վստահ եմ, որ իմ հայտնելիք լուրերը նա արդեն հաղորդած կլինի:

Շատ շնորհակալ եմ ուղարկածդ գեղեցիկ քսակի համար, որը մեծ հաճույք պատճառեց ինձ: Ես հատուկ, գրեթե երեխայական թուլություն ունեցել եմ և ունեմ նվերների նկատմամբ: Գուցե դա կարելի է բացատրել նրանով, որ միշտ ես եմ մտածել ուրիշներին հաճույք պատճառելու մասին: Մի խոսքով, քո նվերն ինձ ուրախացրեց ավելի, քան կարող ես երևակայել:

...Վերջին օրերի ամենազգայացունց իրադրությունն այն է, որ «Մեր ուղին», թերթի հրատարակությունն արգելվեց: Դրա փոխարեն մենք պիտի հրատարակենք «Դարբնոց» անունով մի լրագիր, որի առաջին համարը լույս է տեսնելու վաղը: Գործը հեշտ ու խաղաղ չիրագործվեց: Տեսնո՞ւմ ես այդ հերիֆներին.. . Եվ հենց ինձ վիճակվեց նրանց առաջին այցն ընդունել խմբագրատանը: Պետք է խոստովանեմ, որ իմ նկատմամբ նրանք հնարավորին չափ մեղմ ու զուսպ պահեցին իրենց: Իրարանցման գլխավոր պատճառը Վ.-ի հիմար հոդվածն էր, որն անցել էր առանց քննարկվելու խմբագրական կոլեգիայի կողմից: Չես կարող պատկերացնել, թե ինչքան անմիտ ու անփափկանկատ մարդ է նա: Այն օրը, որ նրա հոդվածը երևաց, ես ահագին աղմուկ բարձրացրի և

գուշակեցի պատահելիքը:

Այսօր հանդիպում ունեցա բժիշկ Ֆուկեի հետ, որը եկել էր Արտավազդին տեսնելու: Նրա մայրը ծանր հիվանդ է, և շատ ազդված է դրանից: Նա սքանչելի մարդ է: Հետաքրքրվեց քեզանով և հարցրեց, թե Զատկի արձակուրդներին Փարիզ գալո՞ւ ես: Ասացի, որ դեռ հայտնի չէ:

Ի դեպ, մեզ իմացրու քո գալու հավանականությունների մասին: Եթե չես կարող գալ, ապա թերևս Հրանտին կուղարկեմ քո մոտ: Գուցե ես ինքս էլ կգաս, թերևս դա տարակուսելի է մի շարք պատճառներով: Բոլոր դեպքերում նախընտրելի կլիներ, որ դու գայիր, եթե դա կապված չէ դժվարությունների հետ և կամ թե դրա հետևանքով տհաճություններ չեն ստեղծվի: Գրիր հատկապես քեզ վերաբերող բոլոր բաների մասին: Ես զարմանում եմ, որ առաջվա պես երկար նամակներ չես գրում:

Համբուրում եմ քեզ և անհամբեր սպասում լուրերիդ:

Քո՝ Զապել
1914, մարտի 20, Սկյուտար